

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

«Տրամուխին է ինձ և անսակաւ
ցաւք սրտի իմոյ վասն եղբարց իմոց և
ազգականաց»:

Մեսրոպ Մաշտոց

Բարձրահասակ, ամուր, թիկնեղ, լանջը նրման Մասիսին,
Գեմքն արծվենի, արեւադայտ և լուսաշող գերթ լուսին,
Այն ո՞վ է, որ շրջում է միշտ ապարանքումն արքայի
Եւ սրտտուր պճնադարդում հղոր լուսովն արեւի:

Ինչո՞ւ արդյոք առանց նրա արքան չառնում ոչ մի քայլ,
Առանց նրա խորհուրդների չեն վճռվում գործ ու բան,
Թեկուզ գործը լինի ջնջին, հույ՞ կարեւոր խկ անդամ,
Մնընթացք է մնում տեղում, մինչև շտա նա պատգամ:

Նրան անխոս ենթարկվում են պաշտականք և իշխանք,
Սպարապետն ակնածանքով տալիս պատիվ ու հարգանք,
Հայ բանակի սիրելին է, իր քաջությամք խիստ հայտնի,
Քանի՞ անդամ փառքով է նա օժեւլ զենքը հայրենի:

Սակայն տխուր, մուսլ է նա, վշտակոծուն, անհանդիստ,
Գրքբում է նրա սիրտը թաղուն կերպով ինչ որ վիշտ,
Ուստի չունի նա անդորր, չունի անդամ հանդիստ քուն,
Արքայական պատիւներից նա չի առնում լիություն:

Եւ պաշտում գեւ չգիտեն գաղանիքն այս մեծ վշտի,
Թե տխրության ամպը ինչո՞ւ, ինչպես նստալ իր սրտին,
Վիշտ մենակ է և մենախոհ տարված ինչ որ մտքերով,
Լիայն աստված գիտե, ինչն է նրան դարձրել սղափար:

Սակայն ո՞վ է, ո՞վ է արդյոք երիտասարդն անվանի,
Իր կտրում է մաքի թրով անդամ համբան դարերի.
— Տարոնացի Մեսրոպն է նա՝ փառքը Հայոց Ինվանի,
Իմաստադրւյն քարտուղարը Վասմշապուհ արքայի:

Վաղուց ի վեր տապակիվում է նա վշտերով հայրենի,
Արյունում է նրա սիրտը, երբ նայում է Հայ մարդին,

Անդիք, անուս և խոշտանդված, շունի թուխք արծվենի,
Ու մինչև և՛ բբ պիտ դալարվի ախպես մթին ճամբեքին:

— Թեկուզ լինին հազար ախպես հզորագույն պալատներ,
Չենք դիմանա մրրիկներին, փոթորիկին մահարեր,
Կհորժանվի ժողովուրդս և երկիրն իմ հայրենի,
Այն կդառնա լուծ ու լծկիր, սարուկ հզոր տիրողին:

Մտածում է ս վշտերից ալլալլում է յուր հոգին,
Դեռ չի գտել ելքն ու ճամբան այս դժվարին պայքարի,
Մակայն կյանքում անլուծելին լուծելի է և դյուրին,
Դժվարագույնն հանճարի մոտ մպտի շարժում է շնչին:

Լուսապայծառ առաջնորդ միշտ կմնա սրտիս մեջ,
Ինչպես սիրս կարոտների հրդեհ անմար ու անշեջ,
Առաջնորդ այն պատմական, երբ Մաշտոցը պալատին
Հրածեշտ տալով իրեն նեանց կրկին դիրկը արևի:

Վիր, դպրություն, — կրկնում էր նա, — ահա զենքը դալիքի,
Հզորագույն միակ սուսերն հաղթանակի ու մարտի:
Կրկնում էր նա դյուրին հզոր հանում վսեմ արևին,
Ու արևը համբուրում էր սրբազնալույս իր հոգին:

Բանալ դպրոց և կաճառներ, դնել հիմքը դիտության,
Ժողովրդին աղբյուրներ տալ, մտքի աղբյուր դյուրեական,
Այնուհետև պատմությունը շուտ կդանի իր ճամբան,
Ժողովուրդս ձեռքը կառնի զենքն իր հավերժ փրկության:


Եվ նա ահա ցուպը ձեռքում և մախաղը իր ուսին,
Գյուղից-դյուղ է անցնում, հասնում մինչ ծերպերը լեռների,
Հյուղ, ազարակ, ամեն իրճիթ լցնում խոսքով դպրության,
Այս է միակ հաստատ ճամբան հավերժաթիռ դյուրության:

Քարոզում է, հյուժվում, հողմում, բայց հիմնում է
կաճառներ,
Ձի ավարտում դորժը, սակայն՝ որքան խոչ կան ու խուժեր,
Օրն անցկացնում նոթի, ծարավ և սնարը քարերին:
Ո՛րքան փափուկ են կոշտերը դադափարի ճամբեքին:

Եվ նա փորձեց բազում անգամ նշանադրեր ստեղծել,
Հայ բարբառին ու հնչյունին ներդաշնակել, հարմարել,
Բայց չգտավ ելքն ու ուղին, աչքպես հեշտ չէր ու դյուրին,
Լեզուներն էլ ունեն իրենց պահանջները դժվարին:



U. Wborny



Եվ որոշեց այցելել ելնել զխառնաներին աշխարհի,
 Մանեւ հոգոր զինանոցը իմաստութեան ու խոսքի,
 Ահա կրկին ցուպը ձեռքին մեկնեց զեպի Սարիք,
 Կուցե աշնտեղ լուծի իրթին դործի կնճիռն ու զաղանիք:

Նա սրբապետեց ժամանակի կաճառները իմաստուն,
 Զպարուրիկեց նրա հոգին հրթիռներով անպատում.
 Արեւելքից վերադարձավ նա ձեռնունայն ու խոսով
 Եւ շնչիկեց նրա սիրտը աստվածային հաճույքով:

Ու գուրս եկավ նա իր խուցից հովերն առած թևերին,
 Խոյանում էր Մասիսն ի վեր զերթ-փոթորիկ ամպածին,
 Նրա սրտով անցնում էին մրրիկները դարերի,
 Հայ աշխարհի վիշտն ու ցավը և տառապանքն անուկի:

Ըմբոստացման հուրն էր վառվում և բորբոքում իր հոգին,
 Պայքարում էր տարերքի դեմ, և՛ աշխարհի և՛ մտքի,
 Սլանում էր ինչպես կայծակ, արդեւք չկար ճամբեքին,
 Միտքն ասում էր. — Թո՛ւր, Մեսրոպ, մինչ զահույքն
 Արարչի:

Նա մեծակ չէր, նրա հոգում լողում էին բյուր աստղեր,
 Իյուր արևներ ծաղում աշնտեղ, արշալուսում դարուններ,
 Հեակում էր նրան անթիվ մի հոծ բանակ անուկի,
 Աջից-ձախից հայ շինականն ու ռազմիկներ քաջարի:

Ու սուրում էր քամին ուժգին Արարատից Արազած,
 Թև էր տալիս Հայ հանճարին, նրա մտքին բորբոքված,
 Ծողում էին աստղերն երկնից, լույսի հեղեղն էր ճայթում,
 Արազածում աստղերից վառ սուրբ կանթեղն էր փողփողում:

Ու Մաշտոցի սիրտը փղծկաց, ժայթքեց որպես հրարուխ.
 — Հե՛յ, — մոնչաց նա դարերին և հողմերին ամենի,
 — Ես կը փչրեմ շղթաները, կապանքները մեր երկրի,
 Մտքի անպարտ թոփչքներով և զորութեամբն անմահի:

Կկառուցեմ նոր բազիլիկներ արևների ու լույսի,
 Ժողովուրդս ուխտի ելած հավերթի հետ կճախրի,
 Ու բուրդերը մազաղաթի կբարձրանան զեպի վեր
 Մասսի նման լուսաղաղաթ ու նրա պես անվեհեր:—

Գճշում էր նա ու խոյանում Մասիսն ի վեր արևին,
 Եեփորում էր ամեն կողմից հանճարածին յուր հոգին,
 Եվ ծծում էր նա անհաղուրդ բուրմունքը մեր դաշտերի,
 Նրա հոգին լցվում էր հորդ, սուրբ զորութեամբ անմահի:

Աղերսում է սիրարորոք, տալիս գլուխն հողերին,
 Եվ բարձրանում ողջ հասակով ձեռքը մեկնած Արարչին,
 Սոսի նման սիրուն է հարվում կանթեղներով լուսածին,
 Ողջ հուժկամբ նա վարվել է տիրոջ անմահ խորանին:

Ու դուրս եկավ նա հաղթապեն մաքի բոցովն ահակի,
 Երեսունութ արևներով ողջունեց մեր աշխարհին,
 Եվ արշալույսը ճառագեց թռիչքներով անսահման
 Ցրիվ տալով դորշ մշուշը մեր դարավոր թմբուժյան:

«Այնուհետև ժողովուրդս դափնեպսակ կհաղնի,
 Ասաղերի մեջ արեվի հետ հալերթածուփ կփայլի,
 Ամեն մի շեն, հյուղ, ագարակ լույսի տաճար կհիմնի,
 Լույսն արևի ճաճանչի պես ամեն խրճիթ կմանի:»

Ու դիտության կաճառները կբարձրանան վեր ու վեր,
 Մաքի հզոր շփնդներով, հաղթանակով անվեհեր,
 Կճառագեն իմաստության արևները վիթխարի,
 Պատմությունը լուսապայծառ նոր թևերով կճախրի:

Եվ այլևս ոչ մի դորեղ, այլևս ոչ մի բռնավոր
 Չի հանդդնի զինաթափել մեղ մեր դեմքիցն ահավոր:
 Խորհում էր նա և սլանում կատարներից դեպի վար
 Արարատյան դաշտով անցնում որպես արև երկնափայլ:

Ու այդ օրից մինչև այսօր հայ միաքն է միշտ դղրդում,
 Լուսածիփուն քո մեծ դյուարը պահած է իր վառ սրտում,
 Եվ դեռ ո՛րքան դարեր կդան, կդան կանցնեն հիացքով,
 Անմահ Մաշտոց, սերունդները սխալի շնչեն քո շնչով:

Ռուբեն վարդապետ

